

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի «ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՒ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում, Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

2008 թվականի հունվարի 25-ի «Մաքսային միությունում ապրանքների ներմուծման եւ արտահանման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 9-րդ հոդվածին համապատասխան,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ՝

#### Հոդված 1

Համաձայնագրի 3-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ պարբերությունները շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

Մաքսային միության այլ մասնակից պետության տարածքից Մաքսային միության մասնակից պետության տարածք ապրանքների ներմուծման դեպքում անուղղակի հարկերը գանձվում են ներմուծող պետության հարկային մարմինների կողմից, եթե այդ պետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ ակցիզային դրոշմանիշներով (հսկիչ դրոշմապիտակներով, նշաններով) դրոշմավորման ենթակա ապրանքների համար: Անուղղակի հարկեր չեն գանձվում Մաքսային միության մասնակից պետության տարածք այն ապրանքների ներմուծման դեպքում, որոնք, այդ պետության օրենսդրության համաձայն, ենթակա չեն հարկման դրա տարածք ներկրելու ժամանակ:

Որոշակի (հատուկ, ազատ) տնտեսական գոտիներ (այսուհետ՝ ԱՏԳ) ներմուծման դեպքում անուղղակի հարկերի կիրառության առանձնահատկությունները սահմանվում են Կողմերի միջև կնքվող միջազգային պայմանագրով, որով կարգավորվում են ԱՏԳ-ների գործելու, ԱՏԳ-ների տարածքներ ներկրվող ապրանքների հարկման կարգի եւ ազատ մաքսային գոտու մաքսային ընթացակարգի սահմանման հետ կապված հարցերը:

## **Հոդված 2**

Համաձայնագրի 10-րդ հոդվածի առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության պայմանագրաիրավական հիմքի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» արձանագրության 2-րդ հոդվածին համապատասխան:

## **Հոդված 3**

Կողմերի միջև սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով: Այդ խորհրդակցությունների կամ բանակցությունների մեկնարկի օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, շահագրգիռ Կողմերից որեւէ մեկի նախաձեռնությամբ՝ վեճը փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

## **Հոդված 4**

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով Կողմերի կողմից սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից, բայց Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ շուտ:

## Հողված 5

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն լեզվով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Արձանագրության ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա հաստատված օրինակը:

Բելառուսի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

Ղազախստանի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

Ռուսաստանի  
Դաշնության  
Կառավարության կողմից